ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ №56/65 «30» 03 2021 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-162-րդ հոդվածների ու ՀՀ կառավարության 11.08.2005թ. թիվ 1599-Ն ու 1384-Ն որոշումների պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի աշխատողների 2021 թվականի ամենամյա արձակուրդի տրամադրման հետևյալ ժամանակացույցը.

ա) ԵՊՀ պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմերի աշխատողներին տրամադրել 35 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2021 թ. հուլիսի 8-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

բ) ԵՊՀ ռեկտորին, պրոռեկտորներին և ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (ներառյալ՝ բաժնի վարիչներին) տրամադրել 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2021 թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

գ) ԵՊՀ գրադարանի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ և 5 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 2021 թ. հուլիսի 22-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

դ) ԵՊՀ այլ կատեգորիայի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2021 թ. հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 25-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված ժամանակացույցից տարբերվող այլ ժամկետներում աշխատողներին ամենամյա արձակուրդ (կամ դրա մի մասը) կարող է տրամադրվել միայն ԵՊՀ ռեկտորի հրամանով:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ